



47. ՔԱՐ ՈՒ ԱՆՍԻՐՏ ՍԵՐ

Մի թագավոր ա ըլել, գա իրա վազիր-վզիրը վեր ա կալել, գնացել ա շրի դրադը, տեհիլ ա, որ ջուրը իրեք իսանի գլուխ ա բերում, հենց ասիլ ա իրա վազիր-վզիրներին.— Գլխները ջրից հանեցեք:

Մզրախովը մի գլխին տվել ին, նի չի մտել:

Թագավորն ասել ա.— Գցեք ջուրը:

Մեկ էլ տվել են հենց անց ա կացել գլխից:

Ասիլ է.— էդ էլ գցեցեք ջուրը:

Մեկին էլ են տվել, գլխի կեսն ա մնացել:

Թագավորն ասել ա.— էս գլուխը վերցրեք տանենք տուն:

Որ տանում են տուն, նազրներն ասում են.— Թագավորն ապարած կենա, ի՞նչ հսկացար, որ արիր:

Թագավորն ասել ա.— Որ խելոք զրիցն արին, գլխի էս կռանը տվել են ու էն կռնիցը դուա ա իկել, գլխումը չի մնացել: Մեկն էլ ասել են՝ Իսկի գլխումը չի մտել— էն էլ են գցիլ ջուրը: Ամա էս ա որ կես տեղն ա մնացել, ինչ որ ասել են, գլխու մեջն ա մնացել:

Թագավորի կնիկը մահացել ա, թագավորը գնացել ա ուրիշ տեղ: Հետո մի ջադու պառավ էկիլ ա թագավորի թագա կնկա կուշտը, ասել ա.— էդ իրա ծերթի կնկա գլուխն ա, եթե էտա չի ըլի՝ քեզ հետ թագավորը շատ լավ կըլի:

Թագավորը ունենում ա մի տասը տարեկան աղջիկ:
Թագավորի թագա կնիկը ջագուին ասում ա.— Բա գլուխն:
Ի՞նչ պետք է անենք:

Ջագուն ասեց.— Պե՛ղքը քցի էրի ու տար քամուն տուր:

Թագավորի կնիկը էրեց ու տվուց աղջկան, աղջիկն էլ տարավ՝
քամուն տվուց: Քամին էն քոզիցը քցեց աղջկա պերանը, ընդուց
լրկուհոքիսացավ, հենց վերջ էկավ, ազատվեց տղա էլ պիրեց:

Որ թագավորն էկավ, առաջ գնացին ասին.— Աչքդ լիս, աղ-
ջիկդ աղա ա պիրել:

Թագավորն ասաց.— Գնալու հատաղ գնամ գլուխը տամ, ես
ազարր թողել եմ ու գնացել, ինչու ա տղա պիրել:

Աղջիկն ասեց.— Թագավորն ապրած կենա, կաց մի բան կա-
սեմ, էլի գլուխս տուր:

Ասեց թե.— Էն գլուխը որ պիրիլ էս, փլան ջագու պառավը
ասավ, որ ձեր հին կնկա գլուխն է: Իմ մերացուս ասավ՝ բա ի՞նչ
անեմ:

Ջագուն ասավ.— Պե՛ղքը քցի էրվի ու տար քամուն տուր: Հենց
քամին նրա քողիցը բերանս քցեց ու էնդուց էլ բահըմ էկավ, էր-
կուհոքիսացա, ու դուս էկավ մի տղա:

Թագավորը հավատաց, գլուխը տվուց ոչ, էն էրեխեն դառավ՝
տաս տարեկան տղա: Հետո, որ էս էրեխեն գնաց իրանց բեխանց
հետ խաղ անելու, էնքան դուվաթ ունեք, որ հենց որի ղոնիցը որ
տվեց՝ կուռը պոկ էկավ, որին սիլլա տվեց՝ մահացավ:

Թագավորին ասին.— Թագավորն ապրած կենա, էրեխեդ մեր
էրեխանց շատ վնասիլ ա, պետք է մենք քոչինք:

Ըրեխեն մորն ասում ա.— Մայրիկ ջա՛ն, ժողովուրդը ոչ,
մենք պետք է քոչինք:

Ըրեխեն ու մերը վեր են կենում գնում: Գընում են տենում մի
տրգի կեսի շափ էրկաթե տուն: Տունն են մտնում ու տենում, որ
տունը խագնեքով լիքն ա, ամեն մի պանն էլ դուզ ու տեղին ա:
Տեսան տակինն էլ մի զերուզամբի կա: Մեր ու տղեն իրիկունը տե-
հան, որ օխտը դե դպա տուն գալիս են, մեկը մի ծառ ա ջլակել,
մեկը մի պախրա ջլակել, մեկը մի արջ ա ջլակել: Մերը վախեց ու
վեր կացավ ասավ.— Տղա ջան, մեր վերջն ա:

Տղեն ասեց.— Մայրիկ ջան, մի վախիլ, ես ըստեղն եմ:

Դեք տեհավ, որ էրկու իսան իրանց տուն են էկիլ:

Դեն ասեց.— Ղուշն իրա թևովը, օձն իրա պորտովը ըստի
իկած չին, դու ինչ իսան իս, որ ըստի էկիլ իս:

Տղեն առաջ կանգնեց, ասեց.— Օխտն աղբեր շինք, ութն աղբեր ըլինք, կենտ-կենտ էկեք, զարգանդում ենք:

Ու թուրը վե կալավ գռան տակը մտավ, էկողի գլուխը տվուց՝ ընկավ զերուզամբին, էսպես վեցի գլուխն էլ տվուց ու ընկավ զերուզամբին: էն մինն էլ վրավուրդ արավ, հենց յարալու ընկավ զերուզամբու մեջը, ու տղեն գլիու շընգավ, թե յարալու ա:

Հետո տղեն ասեց.— Մայրիկ ջան, էս խագինեն էլ, էլ ահագին ապրուստը կուտինք, կկենանք չև մեր մահի օրը:

Հետո էս տղեն վե կացավ գնաց որսը: Մերը գնաց զերուզամբի գլուխը ասեց.— Դև, սախ ե՞ս:

Ասավ, որ.— Հա, սաղ եմ:

Կնիկը յարալուն վի կալավ պերեց, դրան սղացրուց:

Դևը սաղացավ, կնկա հետ լավ ծանոթացավ:

Հետո դևին ասաց.— Ո՞նց անենք, որ տղեն գնա ու էլ հետ չգա:

Դևն էլ ասեց թե.— Դու հիվանդացի, ասա, որ անմահական խնձոր էս ուզում, դա կերթա ու էլ հետ չի դա:

Տղեն էկավ տեհավ, որ մերն հիվանդացել ա ու շատ դարդարավ:

Մերը տղին ասեց.— Գնա անմահական խնձորը պեր, որ առողջանամ:

Տղեն գնաց, շատ գնաց, քիչ գնաց ու մի տեղը դռնախ ընկավ:

Ղոնախատերի անունը Կիրակի էր: Կիրակին ասավ.— Տղա ջան, ո՞ւր ես գնում:

— Անմահական խնձորի եմ գնում:

Կիրակին ձինն էլ, խուրջինն էլ, շուշեն էլ տվեց, որ անմահական ջրից մեջը լցնի:

Կիրակին ասաց տղին.— Բազի շափառներից վախիս ոչ, բաղի շափառն օձ ա, կերթաս գելի ըղաքի խոտը վեր կուլիս ղոչի ըղաքին կդնես, ղոչի ըղաքի դմակն էլ՝ գիլի ըղաքին կդնես, շուշեն անմահական ջրից կլցնես, խուրջինն էլ անմահական խնձորից, որ ղի կտան վախիս ոչ, մտիկ պտի շանես:

Մի մազ էլ տալիս ա տղին, ասում ա.— Բան ա, որ ջահիլություն անես մտիկ տաս, տենաս, որ գալիս են մաղը ծխի՝ կրակ կդառնա ու հետ կդառնա օձը:

Տղեն վեր ա կենում ու գնում բաղը: Գնում ա ղոչի ըղաքի դմակը վեր անում դնում ա գիլի ըղաքին, գիլի ըղաքի խոտը դնում ղոչի ըղաքին ու մտնում բաղը:

Որ մտնում ա բաղը, ասում են.— Գե՛լ, տարա՛վ:

Գւելն ասում ա.— Քանի տարին գել եմ, ես սոված եմ ապրում, ուղղուզ անջախ եմ գտել:

Ղոշն էլ ասում ա.— Էս քանի տարի ղոշ եմ, սոված, էս խոտոր անջախ եմ դտել, մենք էդ տղին շենք վնասիլ:

Անմահական շուրը շուշեն է լցնում էդ տղեն, ու անմահական խնձորն էլ խուրջինն է լցնում էդ տղեն:

Ձիու վրա ա գցում խնձորն էլ, ջուրն էլ, ինքն էլ վեր ըլում ա ձին քշում ա դհա: Եղնուց շատ ղի են տալի, էտուց տղեն եդ ա մտիկ անում, տենում ա, որ օձի շափաւը գալիս ա: Տղեն աստ-ված ա կանչում ու էն մաղը ծխում: Հենց բոց ա տալի ըղաքին, օձը բոց ա դառնում ու էլ չի գա:

Տղեն դալիս ա Կիրակու տուն, էն գիշեր տղեն քնում ա:

Որ քնում ա, Կիրակին էն անմահական շուրը ինքը վերցնում ա և իրան ջրիցը ածում շուշեն: Անմահական խնձորն էլ եդ վերցուց, իրանց խնձորը խուրջինն ածեց:

Տղեն ոավոտը վեր կացավ ու գնաց մոր կուշտը: Մերը որ եսով գուս էլավ, տեհավ, որ տղեն հրեն եդ ա գալի:

Ասեց դեին.— Տղես եդ ա գալի:

Դեն մտավ գերուզամբին թաք կացավ:

Հետո տղեն եկավ, ասավ մերը.— էդ ի՞նչ եղացար, դու բա-րով էկար, տղա ջան:

Մերը էս ջրիցն էլ խմեց, էն խնձորիցն էլ կերավ, ասեց.— Ուխայ, այ տղա ջան, մեղ էլ օլում չկա: Էլ եդ տղեն դուս էլավ:

Դեին ասաց.— Էլ հնար չէլավ:

Դեն ասավ.— Ասա՛, ա՛յ տղա ջա՛ն, քու ղըվաթ՝ որտե՞ն ա:

Տղեն իրիկուն, որ տուն ա գալիս, մերը հարցնում ա.— Այ տղա ջան, քու ղըվաթ՝ որտե՞ն ա:

Տղեն ասում ա.— Ես հիմի սին նի դուս կաղնեմ, դու փետ-քաշը վրա տու:

Սին նի դուս կաղնում ա, փետքաշն էլ մերը վրա ա տալի:

Հիմի ասում ա.— Մայրի՛կ, ղրաղի, թափ տամ ինձ:

Տղեն որ թափ է տալի, օղերը պատին են դիպչում, փշրում:

Տղեն ասում ա.— Էլի չի ոտն արավ:

— Բա ի՞նչը ոտ կանի, տղա ջա՛ն,— ասում ա մերը:

— Մայրիկ ջա՛ն, էրկու բիթս իրարու վրա դի ու դայիմ փթաթի:

Մերը տղի երկու բիթ իրարու վրա դնում ու լարով էլ փռթա-թում:

Տղեն, որ ձեռք ա տալի, որ պոկի լարը երկու բթի օսկոռումը մնում ա:

— Մայրիկ չի իլավ, եդ արա:

Մերը դեհին ձեն ա տալի.— Ի՞նչ ես անում, դուս արի:

Դեն ասում ա.— Ի՞նչ անեմ:

Մերն ասում ա.— Հենց թուրը քաշի մանտր-մանտր կտորի:

Դեն ասում ա.— Շատ էլ որ հնգորտանքս կտորել ա, ես դրան ղիմիշ չեմ անիլ:

Մերը դեհի ձեռից թուրն առնում ա ու տղին կաղնած կտորում ա: Տղի ջանդակը ածում ա խուրջինն ու ձիի վրա գցում ու տրկում:

Ձին արածելով գնում ա Կիրակու տուն:

Կիրակին դուս ա գալի, տեսնում ա խուրջինն, ասում ա.— էյ վա՛յ, էյ վա՛յ, տղին բեթարափ են արել:

Ձիու վրից խուրջինը վեր ա բերում, տեսնում ա, որ տղի ջանդակը խուրջինումն ա, խալիչեն փռում ա, անմահական ջուրը բերում խալիչու վրա բմբլումով ցրցնում ա, էն տղի ջանդակը բերում խալի-խալի խալիչու վրեն շինում, անմահական ջրեն քսում, հետո էլ անմահական ջուրը բերանն ա լցնում ու փչում:

Հենց որ փռնշտում ա, սղանում ու վեր ա կենում:

— Օ՛Ֆ, օ՛Ֆ, — ասում ա, — Կիրակի, ի՞նչ շատ քնել եմ:

Վիրակին էլ ասում ա.— Կավ քնել ես, ամա մի միտքն արա...

Միտքն ա անում, ամեն մի բանն էլ տեսնում ա, թե ինչեր են եկիլ գլխուն:

Տղեն էլի վեր ա կենում ու գնում մոր կուշտը:

Մերն ասում ա.— էդ որ տեղ իր կորել, տղա ջան, շատ կարոտել ի:

— Մայրիկ ջա՛ն, քու ամեն բանն էլ միտս ա:

— Դե՛, — ասում ա տղեն, — դուս արի, դու որ ղմիշ շարիր քնձ կտորես, ես ու դու կլնինք ախպեր: Դե մորս կապի սնիցը, կտրատի:

Դեք սնից կապում ա մորը ու թրով կտրատում ա: Դեն ու տղեն դառնում են ախպեր:

Ասծանե իրեք խնձոր վեր ընկավ. մեկը՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ դուզ խոսողին:

